ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին հաշվետվությունը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների պահանջներով:

1. **Բյուջեի եկամուտների կատարողականը**

2025 թվականի Գավառ համայնքի բյուջեի եկամուտները տարեկան ծրագրով նախատեսված 3,084.555.173 դրամի դիմաց փաստացի կատարվել է 724,732.225 դրամ, որը կազմում է 23.5 %:

**Վարչական բյուջեի եկամուտները** առաջին եռամսյակի համար նախատեսված 769,737.000 դրամի դիմաց փաստացի կազմել է 724,732.225 դրամ, որը կազմում է 94.1 տոկոս:

Սեփական եկամուտների դիմաց նախատեսված 227,568.000 դրամի դիմաց փաստացի կատարվել է 183,216.045 դրամ , որը կազմում է 80.5 %:

**Առաջին եռամսյակի կատարողականը ըստ առանձին եկամտատեսակների ունի հետևյալ տեսքը.**

- Գույքային հարկեր անշարժ գույքից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 31,634.538 դրամ՝ կատարվելով 62.7 %-ով, իսկ գույքահարկ փոխադրամիջոցներից համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 88,155.984 դրամ՝ կատարվելով 86.1 %-ով:

-Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 4,558.997 դրամ՝ կատարվելով 157.2 %-ով:

-Պետական տուրքերի գծով համայնքի բյուջեի մուտքերը կազմել է 4,148.800 դրամ՝ կատարվելով 110.7 %-ով:

-Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով Գավառ համայնքին նախատեսվել է ֆինանսական համահարթեցման դոտացիա 538,605.400 դրամ, իսկ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացում /սուբվենցիաներ ՝ազգային նվազարանների գծով/ կազմել է 2.019.200 դրամ, որոնք ամբողջովին ֆինանսավորվել են:

-Գույքի վարձակալությունից վճարները համայնքի բյուջե մուտք է եղել 9,704.726 դրամ՝ կատարվելով 67.3 %-ով:

-Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները կազմել է 890,880 դրամ:

-Տեղական վճարների մուտքերը կազմել է 42,306.212դրամ՝ կատարվելով 83.1%-ով:

-Ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից մուտքերը կազմել է 711.670 դրամ՝ կատարվելով 35.6 %-ով:

- Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտները կազմել է 1,995.118 դրամ՝ կատարվելով 319.7 %-ով:

**Առաջին եռամսյակի** Ֆոնդային մասի եկամուտները՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը փաստացի կազմել է 17,648.965 դրամ, որը կազմում է 35.3 տոկոս:

2. **Բյուջեի ծախսերի կատարողական**

2025 թվականի առաջին եռամսյակի վարչական բյուջեի ծախսերի պլանը կազմել է 730,118.600 դրամ, որի դիմաց կատարվել է 277,334.700 դրամ, կամ 38.0 %-ով:

Գավառ համայնքի 2025թ. վարչական բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ կառուցվածքը.

| Ծախսերի անվանումը | Պլան տարեկան | Պլան 1-ին եռամսյակ | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|
| **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **553342,4** | **131496,3** | **82501,9** | **62,7** |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 440429,6 | 100392,5 | 66744,1 | 66,5 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 9162,0 | 2028,0 | 1252,0 | 61,7 |
| Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ | 103750,8 | 29075,8 | 14505,8 | 49,9 |
| Պաշտպանություն | 2500,0 | 1250,0 | 0,0 | 0,0 |
| Տնտեսական հարաբերություններ այդ թվում՝ | 231624,0 | 500,0 | 0,0 | 0,0 |
| Գյուղատնտեսություն | 1000,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Ոռոգում | 2000,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Ճանապարհային տրանսպորտ | 228624,0 | 500,0 | 0,0 | 0,0 |
| Շրջակա միջավայրի պաշտպանություն | 244424,0 | 62850,0 | 28022,8 | 44,6 |
| Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն | 90000,0 | 31600,0 | 19038,3 | 60,2 |
| Առողջապահություն | 3400,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 127672,6 | 32491,9 | 15677,2 | 48,2 |
| Կրթություն | 896769,7 | 235055,4 | 130154,5 | 55,4 |
| Սոցիալական պաշտպանություն | 12000,0 | 4000,0 | 1940,0 | 48,5 |
| Պահուստային ֆոնդ | 923500,0 | 230875,0 | 0,0 | 0,0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **3085232,7** | **730118,6** | **277334,7** | **38,0** |

2025 թվականի առաջին եռամսյակի ֆոնդային բյուջեի պլանավորված 168,355.200 դրամի դիմաց կատարվել է 38,111.400 դրամով, կամ 22.6 %-ով:

Գավառ համայնքի 2025 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասն ըստ գործառական դասակարգման ունի հետևյալ տեսքը

| Ծախսերի անվանումը | Պլան տարեկան | Պլան 1-ին եռամսյակ | Փաստացի | Տոկոս |
|---|---|---|---|---|
| **Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | **186768,3** | **35268,3** | **389,9** | 1,1 |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ | 116250 | 4750,0 | 150,0 | 3,2 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 70518,3 | 30518,3 | 239,9 | 0,8 |
| Տնտեսական հարաբերություններ | 795822,6 | 4822,6 | 750,3 | 15,6 |
| Բնակարանային շին. և կոմունալ ծառայություն | 91500,0 | 1035,0 | 0,0 | 0,0 |
| Հանգիստ, մշակույթ և կրոն | 223417,8 | 114401,7 | 29895,5 | 26,1 |
| Կրթություն | 172327,6 | 12827,6 | 7075,7 | 55,2 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1469836,3** | **168355,2** | **38111,4** | **22,6** |